№ 195 Հոկտեմբերի 21 (Նոյեմբերի 2) 1881 Հոկտեմբերի 21 (Նոյեմբերի 2) № 195

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գինում են ստացվի։

Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Դարձեալ խնդրում ենք „ՄՇԱԿԻ“ բաժանորդներից, որոնք մինչև այժմ չեն վճարել մեր լրագրի անցեալ կամ ներկայ տարվայ բաժանորդական վճարը, շուտով հասցնել մեզ իրանց պարտքը։

Մի և նոյն ժամանակ յայտնում ենք որ „Մշակին“ կարելի է գրվել երեք ամսով, վճարելով 3 ռուբլ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ խմբագրին, Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հայոց խնդիր, Ֆրանսիա, Անգլիա, Նամակ Պարսկաստանից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։—ՑԱՌՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Նամակ Թիւրքիայից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բագու, 10 հոկտեմբերի

«Մշակի» № 172 ներքին լուրերի կարգում Վիէննայի ֆրանսիական «Journal d'Oriant» լրագրին բաժանորդական ցուցակի մէջ և իմ անունս է նշանակված։ Այս պատճառով պատիւ ունեմ յայտնել պատուելի խմբագրութեանդ, որ ինձանից ստացված չորս ռուբլին ոչ թէ իմ սեփականութիւնից էր, այլ իմ տնօրինութեան յանձնված մարդասիրական ընկերութեան հասարակաց ընթերցարանին պատկանեալ գումարից, որպէս բաժանորդագին վերոյիշեալ ֆրանսիական լրագրի։ Ցանկալի էր՝ որ այդ թերթի համարները շուտով ստացվէին։

Ինչ որ կը վերաբերի իսկապէս օգտաւէտ լրագրի բաժանորդութեանը կարող եմ յուսադրել ձեզ, որ այստեղի բաժանորդութիւնը արժանի կը լինի բոլոր հայերի պատուին և ապացոյց նրանց ազգային եռանդին։

Թէև պ. Ա. Ապրեսեանցը սկսած է բաժանորդագրութիւնը, բայց սա սահմանափակված է գործավար, բայց համակրելի երիտասարդութեան շրջանով։

Վաճառական կամ ունեւոր դասակարգի մէջ բաժանորդագրութիւնը սկսված է ծերունի Գէորգ Լալայեանցի նախաձեռնութեամբ և պ. Ա. Ծատուրեանցի օժանդակութեամբ՝ որոնք իրանց հասարակական դրութեամբ շատ բաժանորդներ կարող են գտնել։ Միայն սպասվում է, որ տեղւոյս վաճառականները վերադառնալով Ռուսաստանից իրանց սովորական առատութեամբ արձագանք տային այդ գործին։

Բժ. Արամեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Քիւրքճեանի ֆոտոգրաֆիական ժողովածու, Անիի աւերակների պատկերների, ծախվում է «Մշակի» խմբագրատան մէջ։ Ժողովածուն արժէ 20 ռուբլ Թիֆլիսի մէջ, իսկ օտարաքաղաքացիները թող բարեհաճեն 20 ռուբլ գումարի հետ ուղարկել փոստի ծախս 50 կոպէկ էլ։ Այդ 50 կոպէկը կարելի է ուղարկել կամ փողով, կամ փոստի մարկաներով։

—

Պ. Կաղընեով իր վերջին ներկայացումն կը տայ վաղը, հինգշաբթի օր, Արծրունու թատրոնում։

—

Ստացանք ԵՐԵՒԱՆԻՑ 16 ռուբլ բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիանի» համար հետեւեալ անձինքներից. Ռուբէն Զալալեանցից, Տրդատ Վարդանեանցից, Վասիլ Եղիազարեանցից և Մկրտիչ Միանսարեանից։ Առաջվայ բաժանորդական փողի հետ կանի 1089 ռուբլ 53 կոպէկ։

—

Ստացանք 4 ռուբլ բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար պ. Միքայել Թամամշեանից։ Առաջվայ բաժանորդական փողի հետ կանի 1093 ռուբլ 53 կոպէկ։

—

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի բաժանորդագին 21 ռուբլ ստացանք ՍՂՆԱԽԻՑ հետեւեալ անձերից։ Ցարութիւն Շահվերդեան, Ծղալօր Շահվերդեան, օրիորդ Նատալիա Շահվերդեան, օրիորդ Կատարինէ Շահվերդեան, Իսահակ Շահվերդեան, Սիսակ Սիմոնեան, Մովսէս Եարալեան, Միքայել Տէր-Մատթէոսեան, Սէրգէյ Տէր-Մատթէոսեան, Գրիգոր Փարեմուզեան, Ալէքսանդր Գոցեան, Աննա Նինեան, Աղալօ Մինասեան, Վասիլ Մաթէչվիլի, Յովսէփ Գալստեան, Գրիգոր Ամիրաղեան, Դաւիթ Դաւթեան, Խիս Բակուրիձէ (Թուչ) Զաքար Կորդանեան, Ալէքսանդր Լիանոզեան, Ցարութիւն Եարեան, Կոտէ Նադիրաշվիլի, Աղերս Քեխեան։ Առաջվայ բաժանորդական գումարի հետ անում է 1114 ռուբլ 53 կոպէկ։

—

ՓՕԹԻԻՑ մեզ գրում են, «Ամսիս 16-ին ծովային ալէկոծութիւնը վնաս տուեց «Ռուսաց ընկերութեան» շոգենաւերից մինին, որ Ռուսաստանից բերում էր բաւական ապրանք։ Գիշեր ժամանակ հասնելով Փօթիի ծովածոցի մօտ, շոգենաւը գցում է իր խարիսխը ծովածոցից դուրս, ալեկոծութիւնը կատաղի ժամանակ կըտրում է խարիսխը և ներս է գցում շոգենաւը ծովածոցը։ Զարնելով նախկին կամուրջի մնացորդին, ալիքները կիսով չափ ընկղմում են շոգենաւը. մարդիկ, բաղդաւորապէս անվնաս ազատվում են։ Բայց եթէ շոգենաւը սկզբից մըտած լինէր ծովածոցը և այնտեղ գցած լինէր խարիսխը, նա ամեն վտանգից ազատված կը լինէր։ Այս հանգամանքում մեղադրում են «Ռուսաց ընկերութեանը» որ նա ըստ սկզբունքին հակառակ լինելով Փօթիի ծովածոցի չմտնելուն, արգելում է մեծ շոգենաւերին մտնել այդ ծովածոցը։»

—

Մեզ գրում են Փօթիից և հետեւեալը։ «Մեր քաղաքի հայոց եկեղեցին կարճ ժամանակում երկու անգամ կողոպտված է եղել աւազակներից, որոնք տարան 400 ռուբլ գումարի իրեղէններ։ Այդ մասին կարելի է մեղադրել երեցփոխանին իր անհոգութեան համար, որովհետև եկեղեցին ոչ ժամկոչ ունի և ոչ պահապան։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ԽՆԴԻՐ

„Кавказъ“ լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ յօդուածը։

Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի պահանջած վերանորոգութիւնները և բարեփոխումները պէտք է իրագործվեն „հայերով բնակեցրած նահանգների մէջ“։ Այդ անունը, որ ընդունված է Թիւրքաց Հայաստանի աշխարհագրական տերմինի պակասութեան պատճառով, կազմում է առաջին գործնական արգելք ցանկալի վերանորոգութիւնները իրագործելու համար և տարաբաղդաբար Թիւրքաց կառավարութիւնը օգուտ է քաղում այդ արգելքից փոխանակ նրա առաջն առնելու։ Այն հարցը, թէ հայերով բնակեցրած ո՞ր նահանգների մէջ պէտք է մտցնվեն պահանջած վերանորոգութիւնները խառնում են այն հարցի հետ, թէ ասիական Թիւրքիայի ո՞ր նահանգների մէջ հայ ազգաբնակութիւնը մեծամասնութիւն է կազմում։ Տարաբաղդաբար հայերի Թիւ մասին տեղեկութիւնները հակասող են. օրինակ Կոլբը իր ստատիստիկական յայտնի ժողովածուի մէջ հայերի Թիւը որոշում է $4^1/_2$ միլիոն (1860 թ. հրատարակութիւն), մի ուրիշ անգամ ընդամենը 2,931,000 (1879 թ. հրատարակութիւն) և երկու դէպքերումն էլ կարծում է, որ ասիական Թիւրքիայի մէջ 2 միլիոն հայ կայ։ Մէյեր իր մեծ Conversations-lexikon մէջ ասում է, որ հայերը Թւով $2^1/_2$ միլիոն են կազմում և նրանցից Ասիական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 6 հոկտեմբերի

Անցեալ անգամ ձեզ խոստացայ խօսել մի մարդու գործունէութեան վրա, որը տեւել է ամբողջ քառորդ դար. տարակոյս չը կայ, որ ժամանակի երկարատեւութիւնը միշտ չէ կարող լինել նոյնպէս կրիտերիում որ և իցէ գործունէութեան արդիւնքը չափելու և ըստ արժանոյն գնահատելու համար. այդ կը լիներ մի և նոյնը եթէ մարդկանց մտաւոր կարողութիւնը ու օգտաւէտութիւնը չափէինք նոցա տարիքով։ Բայց այսպէս չէ այն մարդու գործունէութեան նշանակութիւնը, որի վրա ուզում եմ խօսել. Մանզումէի Էֆքեարի խմբագիր պ. Փանոսեանի քըսան տարուայ մէջ կատարածը ամենայն վստահութեամբ կարժէ մի քանի խմբագիրների երկու հարիւր տարուայ կատարելի գործունէութեան, եթէ նոցա արածների և յառաջացրածների վրա զաղափար կազմենք արդէն նորանով, ինչ կատարել են ուրիշները 23 կամ 34 տարուայ ընթացքում...

Բայց նախ քան խօսքս սկսելը ուզում եմ վրա ուզում եմ, կը չեղվեմ խնդրից հետեւեալ դիտողութիւնով։ Ամեն կողմից աղաղակում են մեր մէջ, ինչպէս այդ կողմը, այնպէս էլ այստեղ, թէ հայերը ոտ են դրել արդէն գիտակցականութեան և ազգային ինքնաճանաչութեան ճանապարհի վրա։ Որչափ էլ անհաճելի լինի եռանդոտ մարդիկների համար, բայց թոյլ տուէք հրապարակաւ ժպտալ այդ կարծեաց վրա. ինքնաճանաչութիւն և գիտակցականութիւն ասելով այնչափ լայն բովանդակութիւն և ընդարձակ գաղափար կայ այս երկու խօսքերի մէջ, որ չուռ տալով նոցա իմաստի նաև հաղարից մի մասը հայոց վրա, բացի հեգնական ժպիտ ուրիշ բան չի երեւայ մարդու երեսին։ Որ և է աւելորդաբանութեան նստել այս մասին, հաւաստի ենք, որ զուր է, երբ իւրաքանչիւր հայի աչքի առաջ կանգնած են այն գործիչները, որոնք Մովսէս Խորենացիից սկսած մինչև Նազարեանցը, գերեզման են մտել արհամարանք, հալածանք ու ատելութիւն միայն ունենալով իրանց բաժին... Մթթէ նոյնը չէ եղել այն բազմաթիւ գործիչների վիճակը, որոնք ամբողջ կեանքը ազգի սիրոյն նուիրած, այնչափ խորը կերպով են զգացել նորա վիշտ ու դժբաղդութիւնը, որ թէպէտ սոված, թէպէտ մերկ ու ամեն տեսակ ֆիզիկական և բարոյական տագնապների մէջ, բայց ամենը մոռացած, ամենը արհամարհած նոքա ապրել են ու չնչել միայն իրանց տարաբաղդ ազգի սիրով, նորա ցաւերը ողբալով, նորա տանջանքներով արիւն թքելով, բայց ո՞ւր են նոցա անունները, ո՞ւր է Զօրայեանների, Թաղիադեանների, Բեշիքթաշլեանների, Այվատեանի, Մուրատ վարժապետի, Պողոս վարդապետի յիշատակը. նոքա բոլորն էլ մոռացված են այնպէս, ինչպէս պիտի մոռացվեն շուտով և Աբովեանցներ, և Նազարեանցներ, և Նալբանդեանցներ, և Արծրունիներ, և Բաֆֆիներ, և Պատկանեաններ. այսպէս է եղել մեր ազգի «ինքնաճանաչութիւնը» իսկզբանէ հետէ մինչև հիմայ....

Եթէ այս բոլոր օրինակներից հէնց փոքր ինչ ուշքի գայինք, հէնց փոքր ինչ ուղղվելու ճանապարհի վրա դնէինք մեր ոտը, այդչափն էլ հերիք կը լինէր առ այժմ, բայց դժբաղդաբար այդ էլ չենք տեսնում. երբ ռուսահայերի մէջ որ և իցէ մի հայ գեներալի մահուան պատճառաւ Ս. Պետերբուրգից սկսած մինչև Երևան հոգեհանգիստներ են կատարվում, հայ խմբագիրները և գործիչները տամնեակներով են տանջվում, մաքառում, անհետանում, բայց նոցա վրա մի ակնարկ անգամ չը կայ... Իսկ այստեղ աւելի ևս ստրկութիւն, աւելի անգոյնութիւն ու փոքրոգութիւն. ձեզ հէնց մի քիչ գաղափար տալու համար թէ ինչ վիճակի մէջ է տաճկահայոց ազգային ինքնաճանաչութիւնը, հեռու չեմ գնայ և երկար չեմ խօսի, հերիք է, որ ցոյց տամ ձեզ Մասիսի այս օրվայ համարը թիւ 3008, որի մէջ գրված են մի առանձին պարծանքով հետեւեալ խօսքերը 34 տարի խմբագրութիւն արած մարդու կողմից։ Ահա տառական պատճէնը. «Իւկօի պատգամներն, Կիզօի խոհերն, Թիեռի վըճիռներն, Ժիւլ Սիմոնի ճառերն, Ժիւլ Ֆավրի շանթերն, հայր Կակինթոսի բողոքներն, Կառիպալտիի քաջագործութիւնք, Բիպօտիի սխրագործութիւնք միշտ արձագանք կը գտնէին Մասեաց էջերուն մէջ։» Երբ երեսուն ու չորս տարի «խմբագիր» համարված մարդը այս գաղափարը ունէ իր ազգային ինքնուրոյնութեան ու ազգային փառք ու պատիւը ճանաչելու վրա, էլ կարող էք հասկացողութիւն կազմել մնացածների մասին.... «Խմբագիր» կոչված բթամիտ և անսիրտ արարածը առանձին պարծանք է համարում իրան համար, որ 34 տարի պարապվել է միայն Գիզօյով, Տիերով ու Գարիբալդիով, բայց ինչ է եղել այդ ժամանակ իր ազգի վիճակը Հայաստանի մէջ, ինչեր են տեսել և ինչեր քաշել այնտեղ ենիչարներից, դերէբէյներից, քիւրդերից, ավշարներից և Թիւրքմէններից հայ կինը, հայ աղջիկը և հայ տղամարդը, ինչ անձնուիրութեամբ և գերբնական բարոյական ուժերով են դիմադրել նոքա ամեն տեսակ սարսափներին և տանջանքներին, որով կարողացել են հերոսաբար մինչև այսօրս մօտ երկու միլիոն հայ հոգի պահել իրանց պապերի դերեզմանների մօտ—այդ մասին Գարիբալդիի կեանքի հետ մանրամասնաբար հայ հասարակութիւնը ծանօթացնող լրագիրը նոյնչափ հոգատար է եղել, որչափ Զինաստանի ժողովրդի վիճակը իմանալու համար։ Էլ ո՞ւր է «ազգային գիտակցականութիւն և ինքնաճանաչութիւն» տված խօսքերը... Մենք միշտ միայն օտարների կապիկ ենք եղել և կը մնանք միշտ—ահա մեր «ինքնաճանաչութիւնը....»

Ահա այս տեսակէտով և այս սրատամաչ դըրդումից էր, որ վերջացնելով հաշիւս Կ. Պոլսի թշուառ ինտելիգէնցիայի հետ, որոշեցի պարապվել մի քանի ժամանակ այն արժանաւոր գործիչների արարքներով, որոնցից այդ ինտելիգէնցիան ինայում է նաև մի չնչին վարձատրութիւն—պարտու պատշաճ յարգանք և ուշադրութիւն։ Վասնորոյ Փանոսեան, Օղեան, Մուրատեան, Միսակեան, Կարակաշեան, Պարոնեան կը լինեն այսուհետև մի քանի նամակներիս նիւթը։ Սկսենք առաջնից։ Իր ամբողջ կեանքի և գործունէութեան մէջ Կարապետ Փանոսեանը